

ղիկոս. հաւանօրէն՝ պատիւ կամ իշխանութիւն ինչ գերագոյն, կամ գաւառս կամէր յաւելուլ 'ի տէրութիւն Հայոց. եթէ ստոյգ իցէ ասացուածն, որ մնաց թաքուն 'ի մեծի սրտի անդ կայսեր. որում՝ ոչ թէ հինգ ամ մնայր կեալ եւ գործել, այլ եւ ոչ հինգ օր:– Քանզի յութ ամսեան յունիսի եղեւ հանդիպումն նմա դեսպանացն Հայոց, եւ յաւուրն երրորդի (10 յունիսի) աշխարհածանօթ աղիտաբեր վախճան նորին. զի տեսեալ նորա եթէ յերկարէ յոյժ անցք զօրացն ընդ կամուրջն Սելեւկիոյ, յոր ժամանեալ էր եւ ինքն, եհարց զդեսպանս Հայոց, թէ չգուցէ՞ եւ այլ կարճոյ ճանապարհ. եւ նոքա ասեն. Գոյ ընդ հուն գետոյս, եւ թէ կամք իցեն արքայի՝ անցցուք մեզ յառաջ եւ ցուցցուք զհետսն: Հրամայեաց անցանել եւ դառնալ, եւ արարին այնպէս, եւ իբրեւ վստահ եղեւ՝ պատուիրեաց անցուցանել նախ գորդի իւր Փրետրիկ՝ գտերն Սուապայ. զոր եւ իսկոյն անցուցին նուիրակքն Հայոց, եւ դարձան անդրէն յայսկոյս, մինչդեռ կայսր զբօսնոյր 'ի խնջոյս, 'ի վայելուչ իմն տեղոջ առ գետեզերքն, կամ ըստ այլոց՝ յորս ելեալ հրաւիրմամբ իշխանացն Հայոց, թերեւս քաղաքապետին Սելեւկիոյ²⁴. յետ այնր կամեցաւ եւ ինքն՝ հեծեալ յերիվար իւր՝ անցանել, նախագնաց առաջնորդութեամբ նոցին երկուց հարազատացն Կամարտիասաց, շուրջ պատեալ յիւրայոցն յաջմէ եւ յահեկէ եւ 'ի թիկանց. յիշելով թերեւս զխիզախական խայտանս երիտասարդութեանն, որով անցանէրն եւ դառնայր ընդ Ադեսիս գետ (յամի 1158) յարշաւելն ձեռն արկանել 'ի վերայ Վերոնա քաղաքի, կամ յանդգագոյն եւս օրինակաւ ընդ յորդաջուրն Ադդա²⁵. այլ արդ 'ի հասանել 'ի մեջ գետոյն Կալիւկադնեայ՝ խրտեաւ կամ գայթեաց երիվարն, եւ ընկեց զվերելեակ կայսրն 'ի ջուրն. եւ զի քրտնեալ էր եւ 'ի տօթածամու, մինչ չեւ բարձեալ զնա մերձ եղելոցն՝ բացան երակք նորա, ասեն ումանք, եւ կամ իսկոյն ջրահեղձիկ եղեւ, ոչ կարելով առ ծերութեանն²⁶՝ փութով թօթափիլ եւ կանգնիլ. իսկ այլք պէսպէս պատմեն զօրինակ մտիցն 'ի ջուր եւ զպատահարն. կէսք՝ անդէն 'ի ջրին. եւ այլք յետ հանելոյ 'ի ցամաքն՝ ասեն մեռեալ. այլ եւ ասացեալ. «Օրհնեալ ես Աստուած, որ կամեցար՝ զի որպէս ջրով

²⁴ Mentre ch'egli colà si riposava rinfrescando dalle passate fatiche il suo esercito, venne invitato dal Signor degli Armeni alle cacce. – **Cosimo Bartoli**. *Vita di Federico Barbarossa*.

²⁵ Յարշաւելն 'ի նուաճումն Մեդիոլանու՝ հասեալ յեզր գետոյն (Ատտա ըստ Իտալացոց), եւ ոչ գտեալ նաւակ կամ կամուրջ՝ կռուեցաւ ոտիւք 'ի գերան մի, երկուստեք գայիսնօթ ղեկավարեալ կշռակի՝ էանց յայնկոյս:

²⁶ Համարի լինել ամաց եօթանասնից կամ սուղ աւելի: